

«ԷԿՈ - ԿԵՆՏՐՈՆ»

ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ  
համայնքի Սասունիկի կոշտ կենցաղային  
թափոնների աղբավայրի

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ  
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կատարող՝

«Քոնսեկորդ» ՍՊԸ տնօրեն



Վ.Թևոյան



Երևան – 2022թ

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____	4
1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ _____	5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____	8
2.1 Տեղադիրքը _____	8
2.2 Կլիմայական պայմանները _____	9
2.3 Օդային ավազան _____	13
2.4 Ջրային ռեսուրսներ _____	13
2.5 Հողածածկ _____	15
2.6 Կենսաբազմազանություն _____	15
2.6.1. Բուսականություն _____	15
2.6.2. Կենդանական աշխարհ _____	16
2.7 Սոցիալական պայմանները _____	16
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ _____	19
3.1. Ընդհանուր տեղեկատվություն _____	19
3.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ _____	20
4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ _____	22
4.1. Զրոյական տարբերակ _____	22
4.2. Քննարկվող տարբերակներ _____	22
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ _____	23
5.1. Մթնոլորտային օդ _____	23
5.1.1. Աղբավայրային գազի արտանետումներ _____	24
5.1.2. Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա _____	26
5.1.3. Հողածածկ _____	28
5.1.4. Երթևեկություն _____	28
5.1.5. Կենսաբազմազանություն _____	28
5.1.6. Մանիտարապաշտպանիչ գոտի _____	28
5.2. Աղբավայրի փակում _____	28
5.3. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն _____	29
6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ _____	29
6.1. Մթնոլորտային օդ _____	30

6.2.	Ջրային ռեսուրսներ _____	31
6.3.	Հողային ռեսուրսներ _____	31
7.	ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	31
7.1.	Ընդհանուր դրույթներ _____	31
7.2.	Անբարենպաստ պայմաններում և վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները և ծրագրերը _____	32
7.3.	Սոցիալական ազդեցության մեղման միջոցառումներ _____	33
8.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	34
8.1.	Բնապահպանական կառավարման պլան _____	34
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ _____	35
8.2.	Մշտադիտարկումների /մոնիթորինգի/ նպատակը _____	38
8.3.	Մոնիթորինգի տեխնիկական նկարագրությունը _____	38

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ներկայացվող գործունեության շրջանակներում նախատեսում է ՀՀ Արագածոտնի մարզի կոշտ կենցաղային թափոնները տեղափոխել Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում գործող աղբավայր:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը նկարագրում է նախատեսվող գործողությունները, էլակետային բնապահպանական և սոցիալական պայմանները:

Դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ զրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող, նվազեցնող կամ բացառող միջոցառումները:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր, որում մանրամասն նկարագրված են պատասխանատուները և կատարողները:

Սույն գործունեության ձեռնարկող է «Էկո-կենտրոն» ՍՊԸ: Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Վրթ. Փափազյան, 38: Գործունեության հասցեն՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, Աշտարակի համայնք, Սասունիկի վարչական տարածք, Սասունիկ – Երևան խճուղի, 39 հողամաս:

# 1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքները ներկայացված են ստորև.

## ***ՀՀ Հողային օրենսգիրք (2001)***

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը:

Օրենսգիրքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

## ***ՀՀ Ջրային օրենսգիրք (2002)***

Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենսգրքից բխող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Օրենսգիրքը սահմանում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները:

## ***ՀՀ Անտառային օրենսգիրք (2005)***

Օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

## ***ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.)***

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

### ***Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)***

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը:

Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիթորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիթորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

### ***“Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենք (2014թ.)***

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա”, “Բ” և “Գ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Ըստ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի բ. 6) ենթակետի՝ թափոնների օգտագործման բնագավառում՝

“բ. 15 000 եւ ավելի բնակչության սպասարկման համար կամ օրական 10 տոննա եւ ավելի աղբ ընդունող աղբավայրերի կազմակերպում եւ (կամ) կենցաղային թափոնների վերամշակում.” գործունեությունը դասվում է “Ա” կատեգորիայի շարքին:

***Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենք (2014թ.)***

Սույն օրենքը կարգավորում է ՀՀ-ում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները:

Գործունեությունը կարգավորվում է նաև այլ իրավական ակտերով, որոնցից հիմնականներն են.

*«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք*

*Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք*

*Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք*

*Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք*

*Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք*

*Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք*

*“Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենք*

*“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք*

*«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,*

*«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,*

*«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում:*

*«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշում*

*«ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշումը:*

*«Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր /ընդունված ՀՀ ԱՆ նախարարի 2002թ. մարտի 6-ի N138 հրամանով/:*

*ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշումը,*

*ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկը ՀՀ տարածում կիրարկելու մասին» N321 -Ա հրամանը և աղբավայրի կառուցումն ու շահագործումն իրականացնել իրականացնել սույն հրամանի պահանջներով,*

*ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N64-Ն որոշումը և ստորերկրյա ջրերի պահպանությունը ապահովելու նպատակով առաջնորդվել ՀՀ Ջրային օբյեկտների և սույն որոշման պահանջներով:*

## **2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂԻ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

### **2.1 Տեղադիրքը**

Ներկայացվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում՝ Սասունիկ – Երևան խճուղի մերձակայքում:

Աղբավայրը գտնվում է ք. Աշտարակից 9կմ , Սասունիկ բնակավայրից՝ 3.5 կմ, Պոռոջյան բնակավայրից 2.5 կմ և ք. Երևանից 10 կմ հեռավորության վրա:

Արագածոտնի մարզի այս շրջանը բնութագրվում է չոր տափաստանային և տափաստանային լանդշաֆտային գոտիներով:

### *Երկրաբանություն*

Տարածաշրջանի երկրաբանական կտրվածքի ձևավորման գլխավոր գործոնը հրաբխային Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեությունն է: Այն առավելապես դրսևորվում է անդեզիտա-բազալտային, անդեզիտա-դացիտային, տուֆոլավային հրաբխահոսքերով: Վերջիններիս արտաժայթքումների ընդմիջումների ժամանակահատվածներում, բազալտային լավահոսքերի միջև



տեղակայվել-կազմագոյացել են հրաբխային լեզվակներ ու արտանետվածքներ՝ սերտաճած խարամա-մոխրա-պիրոկլաստիկ հրաբխանետվածքների հետ: Առանձին տարանջատված տեղամասերում, կտրվածքի ստորին հորիզոններում ի հայտ են գալիս լիպարիտապեոլիտ-օբսիդիանային, հաճախ նաև պեմզային արտանետվածքներ և լավահոսքեր: Լավային հոսքերն ունեն հիմնականում հարավային և հարավ-արևմտյան ուղղություններ: Դրանք գլխավորապես ծածկված են էրոզիոն գոյացությունների հաստ շերտով, որոնք պարունակում են կավա-բեկորային նստվածքագոյացումներ:

Տեղանքի երկրաբանական պայմանները ներկայացված են սույն հաշվետվությանը կից տեխնիկական զեկույցում:


### *Սեյսմոլոգիա*

Համաձայն ՀՀ Ազգային ատլասի քարտեզների, տեղանքը գտնվում է երկու գոտիների միջակայքում, ըստ որոնց երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ՝ ըստ Ռիխտերի սանդղակի, առավելագույն հորիզոնական արագացումը համապատասխանաբար 0.1 – 0.2 և 0 .0 – 0.3 մ/վրկ<sup>2</sup>: ):

### **2.2 Կլիմայական պայմանները**

Սասունիկի շրջանին բնորոշ է չոր ցամաքային կլիման: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է 20-ից 24°C միջակայքում: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 40°C և ավելի: 10°C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը 180-ից 200 է: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է -4-ից -6°C միջակայքում: Նվազագույն ջերմաստիճանը հասնում է -34°C-ի: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 1-ից 3 ամիս: Առանց սառնամանիքի օրերի թիվը տատանվում է միջինը 200-ից 240 օրերի միջակայքում: Տարեկան տեղումների քանակը կազմում է 300-400 մմ, որոշ դեպքերում՝ 400-500 մմ: Տարեկան գոլորշունակությունը 900-1100 մմ է և օդի միջին հարաբերական խոնավությունը տատանվում է 40%-ից (ամռանը) 75% (ձմռանը): Քամիների ուղղությունները հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան են:

Ստորև բերված է տեղանքի իրադրային սխեման /նկար 1/ և կլիմայական պայմանները ըստ Աշտարակի օդերևութաբանական կայանի տվյալների:



Նկար 1. Տեղանքի իրադրային սխեմա

*Աղյուսակ 2.1. Միջնորոտային օդի միջին ջերմաստիճանը Աշտարակ քաղաքի օդերևութաբանական կայանի տվյալներով*

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Աշտարակ	1090	-4,2	-1,3	4,4	11,3	16,2	20,8	24,7	25,0	20,2	13,6	6,6	-0,5	11,4	-25	41

*Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Աշտարակ քաղաքի օդերևութաբանական կայանի տվյալներով*

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Աշտարակ	1090	76	68	61	60	59	53	51	49	53	61	70	77	62	67	40

*Աղյուսակ 2.3. Արևափայլի տևողությունը Աշտարակի օդերևութաբանական կայանի տվյալներով*

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Աշտարակ	120	152	183	203	255	320	362	332	295	230	151	94	2697

Աղյուսակ 2.4. Քամու պարամետրերը Աշտարակ քաղաքի օդերևութաբանական կայանի տվյալներով

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Սամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհորմությունների կրկնելիությունը,%	Միջին ամսական արագությունը,մ/վ	Միջին տարեկան արագությունը,մ/վ	Ուժեղ քամիներով (15մ/վ օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ո" տարիների ընթացքում		
		Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
		892,0	Հունվար	4	21	22	11	16	12					10	4	0
1,6	2,0			2,2	2,3	2,0	1,8	2,0	2,1							
Ապրիլ	4		18	23	12	15	13	11	4	0	2.7					
	3,7		2,8	2,6	2,8	2,8	2,7	2,9	2,8							
Հուլիս	4		26	23	11	12	11	9	4	0	3.2					
	4,4		3,5	3,3	3,2	3,2	2,6	2,7	3,2							
Հոկտեմբեր	4		24	26	12	13	10	9	2	0	2.2					
	1,7		2,1	2,3	2,4	2,3	2,1	2,1	2,2							

### 2.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2020 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2020 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Սասունիկ բնակավայրում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ-ի առաջարկած համապատասխան ձեռնարկ-նուդեցույցի<sup>1</sup>: Ըստ այդ նուդեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

### 2.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման

<sup>1</sup> ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» նուդեցույց-ձեռնարկ: Երևան-2011

տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

#### Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք (ՋԿՏ)

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ- կենցաղային կեղտաջրերը:

2020 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 25%-ում՝ 3-րդ դաս, 15%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2020 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը և Գետառը:

Սասունիկի շրջանը գտնվում է Քասախ գետի ավազանում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով: Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և ընդհանուր ֆոսֆորով: Գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Աղբավայրից 1.5 կմ հեռավորության վրա անցնում է ոռոգման ջրանց, որը տարվա ընթացքում գործում է մի քանի ամիս: Սակայն այն գտնվում է ջրբաժանի մյուս կողմում և չի կրկ աղբավայրի ազդեցությունը:

## 2.5. Հողածածկ

Տեղանքը բնութագրվում է չոր տափաստանային և տափաստանային լանդշաֆտային գոտիներով: Սասունիկի տարածաշրջանում հողերի մեծ մասը ներառված է գյուղատնտեսական շրջանառության մեջ և պահպանվել են վայրի բնության միայն փոքր կղզյակներ: Այստեղ հիմնականում տարածված են շագանակագույն հողերն՝ իրենց բազմաթիվ ենթատիպերով:

Շագանակագույն հողեր. այս տիպի հողերը հիմնականում տարածված են ծրագրի սկզբնամասից մինչև վերջնամաս ընկած հատվածում: Դրանք ունեն հետևյալ առանձնահատկությունները. առաջին՝ հումուսի միջին պարունակությունը 2-4% է, երկրորդ՝ քարքարոտ են, երրորդ՝ աչքի են ընկնում խիստ արտահայտված, մասամբ ցեմենտացված էյուվիալ-կարբոնատային հորիզոնի առկայությամբ, չորրորդ՝ ունեն թույլ հիմնային և հիմնային ռեակցիա (pH 7.4-8.5), հողի կլանունակությունը 30-35 մգ/էկվիվալենտ է և հինգերորդ՝ ունեն անբարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ:

## 2.6. Կենսաբազմազանություն

### 2.6.1. Բուսականություն

Ներկայացվող տարածքը վերընթաց լանդշաֆտային գոտիներից զբաղեցնում է չոր տափաստանային ցածր լեռնային /1000-1600 մ/ գոտին, որին առանձին տեղամասերում /մանավանդ հարավահայաց և անջրդի/ բնորոշ է *Կիսասանապատային, իսկ հիմնականում՝ Տափաստանային բուսածածկի* տիպը:

*Կիսասանապատային բնական բուսածածկի հիմնական կազմը* օշինդրա-էֆեմերային է, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans Willd., Kochia prostrata (L.) Schrad., Capparis spinosa Willd., Ceratoides papposa Botsch. et Ikonn., Atraphaxis spinosa L., Rhamnus pallasii Fisch. et Mey., Tanacetum argyrophyllum (C. Koch) Tzvel., Poa bulbosa L. Bromus, Aegilops, Eremopyrum, Alyssum, Aeluropus littoralis (Gouan) Parl.*

Տափաստանային բնական բուսածածկի կազմը հացազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ Շյուդախոտ վալենսիական /*Festuca valesiaca Gaudin*/, Շյուդախոտ ոչխարի /*F. ovina L.*/, Բարակախոտ՝ երկու տեսակ /*Koelaria albobii Domin, K. cristata (L.) Pers.*/, Կծմախոտ /*Bothriochloa ischaemum (L.) Keng*/, Փետրախոտ՝ երեք տեսակ /*Stipa capillata L., S. lessingiana Trin. et Rupr., S. tirsia Stev.*/, Սեզ մազակիր /*Elytrigia trichophora (Link) Nevski*/, Մակարդախոտ /*Galium verum L.*/, տեսակներ՝ Սեզախոտ /*Agropyron*/, *Andropogon*, Քոսքունկ /*Scabiosa*/, Բերենիկե /*Veronica*/, Օշինդր /*Artemisia*/, Հազարտերևուկ /*Achillea*/, Գազ /*Astragalus*/:

Աղբավայրի տարածքին մոտ հանդիպում է՝

- Սիմպեկմա ճպուռ, *Sympecma paedisca*: Կարգավիճակը: Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի

չափանիշներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1b+B 2b: Համառոտ նկարագրությունը: Բարեկազմ մարմնով, փոքր չափի ճպուռ է (մարմնի երկարությունը 36-39մմ), գունավորումը դեղնադարչնագույն է, գլխի վերին մասը, կրծքի և փորիկի տերգիտների միջնամասերը սովորաբար քիչ թե շատ լավ արտահայտված, մետաղական փայլով և բավականին լայն շագանակագույն գոլով են:

– Կարմրատու բազե, *Falco vespertinus* Linnaeus: Կարգավիճակը: Անհետացող տեսակ է : Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) “Near Threatened” կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափանիշներով գնահատվում է որպես «Խոցելի» VU Blab (iii)+2ab(iii), D1:

Անմիջապես աղբավայրի տարածքը նախկին հանքավայրի տաածք է, որտեղ ամբողջությամբ խախտված է հողածածկը և այստեղ բացակայում է բնական բուսածածկը:

### ***2.6.2. Կենդանական աշխարհ***

Տեղանքում լայնորեն տարածված կենդանատեսակներից հանդիպում են կաթնասուններից՝ նապաստակ (*Lepus europaeus*), աղվես (*Vulpes vulpes*), գայլ (*Canis lupus*) և մի շարք կրծողներ:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից Սիմպեկմա ճպուռ / *Symplocma paedisca* (Brauer, 1877/, Անդրկովկասյան սահնօձ //, Սպիտակափող սոխակ // և Մեխելի պայտաքիթ չղջիկ // կենդանատեսակների ներկայությունը հնարավոր է հետազոտվող տարածաշրջանում:

Անմիջապես աղբավայրի տարածքը նախկին հանքավայրի տարածք է, որտեղ ամբողջությամբ խախտված է հողածածկը և այստեղ բացակայում են վայրի կենդանիների բնակատեղիները:

## **2.7. Սոցիալական պայմանները**

Աղբավայրի տարածքը տեղակայված է Աշտարակի համայնքի Սասունիկ – բնակավայրի և Կոտայքի մարզի Նաիրի համայն քի Պոռշյան բնակավայրի մերձակայքում<sup>2</sup>:

*Աշտարակ համայնք*  
Բնակչություն՝ 78208

<sup>2</sup> Տեղեկատվությունը ըստ Կոայքի և Արագածոտնի մարզպետարանների պաշտոնական կայքերի



Աշտարակ միավորված համայնքի կազմում են գտնվում Աշտարակ, Ագարակ, Աղձք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմաղբյուր, Բյուրական, Դպրևանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եղեսիա, Նոր Երզնկա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Վերին Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով բնակավայրերը:

Համայնքում առաջնային են համարվում աշխատանքային ռեսուրսների լիարժեք օգտագործումը, խմելու եւ ռոռգման ջրի ջրագծերի վերանորոգումը, փողոցային լուսավորության խնդիրը, քաղաքի գազաֆիկացումը: Աշտարակ քաղաքը Երեւան քաղաքից գտնվում է 22կմ հեռավորության վրա: Հանդիսանում է տրանսպորտային հանգույց: Այստեղով են անցնում Երեւան-Աշտարակ-Թալին, Երեւան-Աշտարակ-Ապարան միջպետական նշանակության ավտոմայրուղիները:

Աշտարակը հայկական աղբյուրներում հիշատակվում է 9-րդ դարից: Հնում մտել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի մեջ: Այստեղ կան վաղ ժամանակներին վերաբերող պատմամշակութային կոթողներ: Այստեղ 5-րդ դարում կառուցվել է Ծիրանավոր եկեղեցին, որը 18-րդ դարում վերանորոգվել է: Եկեղեցու շրջակայքը տեղացիները անվանում են «Բերդաթաղ»: 7-րդ դարում կառուցվել է ս. Աստվածածին եկեղեցին, որը տեղացիները անվանում են Կարմրավոր՝ կարմիր քարով կառուցված լինելու պատճառով: Քաղաքի կենտրոնում է գտնվում ս. Մարինե եկեղեցին՝ 1281թ: Հիշատակության է արժանի Քասաղի եռակամար կամուրջը, որը կառուցվել է քանաքեռցի մեծահարուստ Մահտեսի խոջա Գրիգորի կողմից 1664 թ: Մուղնի գյուղում է գտնվում ս. Գեւորգի վանքը՝ 17-րդ դար:

Քաղաքը տեղադրված է ծովի մակարդակից միջին 1130 մ բարձրության վրա՝ Քասաղ գետի երկու ափերի ընդարձակ հարթության վրա: Կլիման մերձարեւադարձային է: Հունվարյան միջին ջերմաստիճանը -13 է, հուլիսյանը՝ 24: Տարեկան տեղումների քանակը 350մմ է:

Քաղաքի առկա բնակչությունը կազմում է 25607 մարդ, որից 47% տղամարդիկ են, 53%՝ կանայք: Աշտարակը ունի միջնակարգ դպրոցներ, երաժշտական եւ մարզական դպրոցներ, մանկապարտեզներ, մշակույթի տուն, գրադարաններ, մարզադաշտ, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց:

Աշտարակում է գտնվում Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի ռադիոֆիզիկայի եւ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը: Տնտեսության մեջ կարեւոր տեղ է զբաղեցնում արդյունաբերությունը: Այստեղ կան տարբեր ճյուղերի ձեռնարկություններ: Այստեղ գործում է «Միկրոն»՝ ձեռնարկությունը, որը զբաղվում է փորձասարքերի, արբանյակային ալեհավաքների, գունանյութի եւ ներկերի, շինարարական սալիկների

արտադրությամբ: Ունի պոլիէթիլենային տարաների արտադրություն, պոլիգրաֆիական գործարան, որը զբաղվում է տպագրական իրերի արտադրությամբ: Չարգացած է սննդի արդյունաբերությունը: Այստեղ կան խաղողի վերամշակման եւ գինու հումքի ստացման կետեր: Հնուց Աշտարակը հայտնի է անուշահամ գինիների եւ չոր մրգերի պատրաստմամբ:

Գյուղատնտեսությունը նույնպես զարգացած է, հատկապես պտղաբուծությունը եւ խաղողագործությունը: Հողահանդակները հիմնականում ոռոգվում են Քասախի ջրերով: Պահուստային հողերում բազմամյա տնկարկները կազմում են 58 հա, արոտավայրերը՝ 433 հա: Մշակում են նաեւ հացահատիկային, բանջարաբոստանային կուլտուրաներ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Ունի թռչնի մսի եւ ձվի արտադրություն:

Սասունիկը գյուղ է ՀՀ Արագածոտնի մարզի Քասախ գետի ձախափնյա հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 4 կմ հարավ-արևելք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1070 մետր: Գյուղը հիմնադրվել է 1955 թվականին որպես Սովխոզ No39, իսկ 1964 թվականին վերանվանվել է Սասունիկ: Սասունիկի բնակչության նախնիների մի մասը եկել են Վրաստանից և Ադրբեջանից, իսկ մի մասն էլ հայրենադարձներ են:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ և այգեգործությամբ:

*Նաիրի համայնքի Պռոշյան գյուղ*

Մակերես՝ 11.88կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 5638

Համայնքում գործում են՝ 1 դպրոց, 1 մանկապարտեզ, 1 արվեստի դպրոց, 1 գրադարան:

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1250 մ

հեռավորությունը մայրաքաղաքից՝ 6 կմ

հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6.5 կմ

*Պատմական ակնարկ*

Գյուղ՝ Եղվարդից 13 կմ հարավ-արևմուտք: Հիմնադրվել է 1960թ. , Երևան-Աշտարակ ավտոմայրուղու ձախ մասում, խամ ու խոպան հողերի վրա: Հյուսիսային կողմից գոտիավորվում է «Արզնի-Շամիրամ» ջրանցքի 2-րդ հերթով, արևելյան կողմից սահմանակից է Քասախ գյուղին, հարավից սահմանակից է Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղին, իսկ արևմուտքից՝ Արայի համայնքին: Գյուղում գործում է կոնյակի գործարան: Բնակչությունն զբաղվում է խաղողագործությամբ և անասնապահությամբ: Գյուղմթերքներից իրենց որակով ճանաչում ունեն Պռոշյանի

խաղողն ու ծիրանը: Գյուղի բնակարանային ֆոնդը բաղկացած է 11 եռահարկ, 3 հնգահարկ բազմաբնակարան շենքերից, մնացածը հիմնականում երկհարկանի բնակելի տներ են: Արցախյան ազատամարտում իր լավագույն մասնակցությունն է ցուցաբերել «Պոռչյան» ջոկատը՝ տալով 8 զոհ և 1 անհայտ կորած: Իր սխրանքներով և հերոսությամբ աչքի է ընկել ջոկատի հրամանատար, անհայտ կորած, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Կարոտ Մկրտչյանը, ում անունով էլ անվանակոչված է համայնքի մշակույթի տունը: Անմահ փառքով է պսակվել նաև Շուշիի առանձնակի գումարտակի փոխհրամանատար Պետրոս Ղևոնդյանը /Պետո/, որը հետմահու արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի: Նրա անունով է անվանակոչվել գյուղի միջնակարգ դպրոցը:

### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

#### ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

##### 3.1. Ընդհանուր տեղեկատվություն

Աղբավայրը սանիտարական կառույց է, որը նախատեսված է կոշտ կենցաղային թափոնների պահեստավորման, մեկուսացման և հեռացման /թաղման/ համար՝ ապահովելով պաշտպանություն հողի, մթնոլորտի, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումից, կանխելով պաթոգենների, կրծողների և միջատների տարածումը:

Աղբավայրում նախատեսվում է ընդունել բնակչության կողմից սպառման գործընթացում բնակելի տարածքներում առաջացած, սանիտարական մաքրման արդյունքում առաջացած (համայնքի սան.մաքրման ծառայության կողմից հավաքված և աղբավայր տեղափոխված), իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած թափոնները, որոնք բաղադրությամբ նման են կոշտ կենցաղային թափոնների: Վտանգավոր թափոններ չեն ընդունվելու: Համայնքի սան.մաքրման ծառայության պատասխանատուները զգուշացված են, որ վտանգավոր թափոններ չեն ընդունվելու: Անմիջապես բնակիչներից աղբ ընդհանրապես չի ընդունվելու:

Ներկայացվող տարածքի մակերեսը՝ 8 հա, ընդերքը կավավազային, տեղադրման տարածքի փոսի խորությունը 6-10 մետր:

Նախկինում այս տարածքում շահագործվել է քարի հանք:

2015 թվականին կազմակերպված մրցույթի արդյունքում տարածքը վարձակալության է տրվել «Էկո-կենտրոն» ընկերությանը՝ կենցաղային աղբավայր կազմակերպելու պայմանով (վարձակալության պայմանագրի պատճենը կցվում է):

Տարածքի (կադաստրային ծածկագիր՝ 02-095-0185-0027) նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ

ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների:

Քաղաքաշինական նորմերով բնակավայրերի կենցաղային թափոնների աղբավայրերի համար նախատեսված սանիտարապաշտպանիչ գոտին կազմում է 300մ: Փաստացի այդ սահմաններում որևէ բնակավայր, սպասարկման կամ հանրային այլ օբյեկտներ չկան:

### 3.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Աղբավայրը նախատեսված է 25 տարի ժամանակով, օրեկան 10-30 տոննա կենցաղային և սանիտարական մաքրման արդյուքում առաջացած թափոնների ընդունման և պահեստավորման /թաղման/ համար: Ծառայություն է մատուցվելու Արագածոտն մարզի հարակից համայնքներին՝ Աշտարակ, Սասունիկ, Օշական, Ոսկեվազ, Ագարակ, Կարբի, Փարպի, Կոշ, Ուշի, Օհանավան:

Աղբավայրի թափոնների պահեստավորման տարածքը կազմում է 8 հա, որից առաջին փուլում կշահագործվի 4 հա: Գրունտային ջրերը գտնվում են 25 մետր խորության վրա, թափոնների թաղման տարածքը կավային է և ունի 2.0-3.5 մետր հզորություն:

*Հիմնական տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներն են.*

- Աղբավայրում կատարվում են թափոնների տեղադրում և տոփում երկու հարկաբաժիններով, յուրաքանչյուր հարկաբաժինը 2.5 մ բարձրությամբ: Յուրաքանչյուր 1 մետր հաստությամբ տոփանված թափոնները մեկուսացվում են 0.25-0.30 մ հաստությամբ հողաշերտով:

- Պահանջվող 2.5 մետրը բարձրության ապահովման և խտության ստուգման նպատակով տեղադրվում են չափման սյուներ /ռեպեռներ/:

- Աղբավայրը ունի մուտքի և ելքի հսկիչ կետ,

- Մեքենաների անիվների ախտահանման կետ, /մեքենաների ելքի դեպքում կատարվում է անիվների պարտադիր ախտահանում  $\text{L}\cdot\text{H}\cdot\text{O}\cdot\text{N}\cdot\text{L}$  տեսակի 3% նյութով /, որի արդյունքում արտահոսք չի առաջանում,

- 1 մ<sup>3</sup> թափոնների մեկուսացման համար անհրաժեշտ է 0.25 մ<sup>3</sup> հող: Առաջին հերթի փոսորակի գրունտը/հողը տեղադրվում է աղբավայրի պարագծով նախատեսված տարածքներում, իսկ երկրորդ և երրորդ հերթի փոսորակներից առաջացած հողը օգտագործվում է առաջին և երկրորդ հերթերի հատվածներում թափոնների մեկուսացման համար:

- Աղբավայրը նախատեսված է 925.000 մ<sup>3</sup> (ոչ տոփված վիճակում) կամ 231.250 տոննա (0.210 տ/մ<sup>3</sup> աղբավայր առաքվող թափոնների միջին խտությամբ թափոններ ստանալու համար):
  - Չոր ամառային սեզոններին թափոնները խոնավացվում են, բարձրացնելով դրանց խտացման հզորությունը, հրդեհները կանխելու համար: 1մ<sup>3</sup> թափոնի համար ջրի մոտավոր ծախսը 10 լիտր է:
  - Աղբավայրում հեռացման ենթակա թափոնների հաշվառումն իրականացվում է հերթապահ անձնակազմի կողմից, կատարվում է գրանցում ԿԿԹ-ի գրանցման մատյանում և տրվում է կտրոն, որը լրացվում է մեքենայի էլքի ժամանակ երկու օրինակից՝ պատվիրատուի և մեր կազմակերպության համար:
  - Աղբավայրի աշխատանքային ժամերն են աշխատանքային օրերին՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8.00-ից մինչև 20.00, հանգստյան օրեր – շաբաթ և կիրակի:
  - Անհրաժեշտության դեպքում, նախնական պահանջով, հնարավոր է թափոններ ընդունել հանգստյան օրերին և տոն օրերին:
  - Աղբավայրում նախատեսված է տեղադրել պահուստային ջրի տարողություն:

*ԿԿԹ կանխատեսվող ծավալները*

Աղբավայրում ԿԿԹ-ի տեղադրման	
Տարեկան ծավալը -----	29.000 խ.մ
<b>այդ թվում՝</b>	
Աշտարակ քաղաքի կոմ. ծառայուուն-	
և հարակից խոշորացված համայնքներ----	27.500 խ.մ
/Բնակիչներ, սան. մաքրում/	
Այլ իրավաբանական անձինք-----	1.500 խ.մ
/Կենցաղային թափոն/	

Կոշտ – կենցաղային թափոնների ընդունման և տեղադրման ծառայությունների սակագինը սահմանվում է արտադրական ծրագրի հիման վրա, իսկ սակագների հավելավճարները՝ կոմունալ կազմակերպության ներդրումային ծրագրի հիման վրա:

## 4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

### 4.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում Սասունիկի աղբավայրը գործում է անկազմակերպ եղանակով: Այս դեպքում՝

- Աղբավայրի նախապատրաստման և շահագործման հետ կապված նոր բնապահպանական և սոցիալական ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնաձին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից զրոյական տարբերակի դեպքում աղբահանությունը կիրականացվի ոչ պատշաճ ձևով, աղբը հիմնականում կկուտակվի դրա համար չնախատեսված վայրերում, կտարածքվի բնակավայրերի և շրջակա տարածքներում, առանձնապես վտանգավոր է մանկական և ուսումնական կառույցների տարածքներում: Աղբի կուտակման վայրերում կշարունակվեն բռնկումները, որոնց արդյունքում առաջանում են մի շարք վտանգավոր նյութեր, այդ թվում խիստ թունավոր դիօքսիններ:

### 4.2. Քննարկվող տարբերակներ

Մույն ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում քննարկվել են աղբավայրի շահագործման հետևյալ տարբերակները.

- Ներկայում գործող չկազմակերպված աղբավայրը փակվում է, կատարվում է նոր տեղի ընտրություն և նոր աղբավայրի կառուցում
- Գործող աղբավայրում իրականացվում են բարելավման աշխատանքներ՝ համապատասխանացնելու համար օրենսդրական պահանջներին:

Հաշվի առնելով աղբահանության վիճակի բարելավման հրատապությունը և ֆինանսական խնդիրները, Աշտարակի համայնքապետարանը որոշում է կայացրել Սասունիկի չկազմակերպված աղբավայրը աճուրդով տրամադրել այնպիսի ընկերության, որը կհամապատասխանեցնի աղբավայրը սանիտարական աղբավայրի պահանջներին և կշահագործի այն:

## 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աղբավայրի ահագործման ընթացքում ազդեցությունը կապված է աղբի տեղափոխման, կուտակման, գտման և տեղակայման աշխատանքների հետ:

### 5.1. Մթնոլորտային օդ

Աղբավայրի շահագործման ընթացքում օդային ավազանի վրա ազդեցությունը պայմանավորված է աղբի քայքայման /անաերոբ խմորում/ ընթացքում առաջացող աղբավայրային գազի /կենսագազ/ արտանետումներով: Խմորումը կլինի անաերոբ, քանի որ աղբը տեսակավորումից հետո կծածկվի հողային շերտով և հետագա գործընթացները տեղի կունենան առանց թթվածնի ազդեցության: Ըստ նախագծի կենսագազի հիմնական քանակները կսկսեն առաջանալ աղբավայրի շահագործումից մոտավորապես 3 տարի հետո:

Աղբավայրերում առաջացող կենսագազը հիմնականում պարունակում է ածխաթթու գազ և մեթան: Ստորև բերված են Նուբարաշենի աղբավայրում առաջացող կենսագազի քիմիական կազմի հետազոտության արդյունքները, կատարված ճապոնական «Շիմիզու» ընկերության կողմից 2004 – 2006 թվականներին:

*Աղյուսակ 5.1. Նուբարաշենի աղբանոցի կենսագազի անալիզների արդյունքները*

Նմուշառման կետի համարը	Մեթան, % ծավալային	Ածխաթթու գազ, % ծավալային	Թթվածին, % ծավալային	Ածխածնի օքսիդ, ppm	Ծծմբի երկօքսիդ, ppm
1	62	31	1.1	75	>100
2	61	29	1.2	68	>100
3	60	29	1.3	34	>100
4	59	30	1.7	60	>100
5	59	29	1.9	-	>100
Միջինացված	60.2	29.6	1.44	59.25	>100

Կենսագազի առաջացումը կարող է տևել մինչև 100 տարի և նույնիսկ ավելի՝ որոշակի մարման ընթացքով:

Հաշվի առնելով աղբի փոքր քանակները, ներկա փուլում համայնքապետարանը նպատակահարմար չի համարում պլանավորել աղբային գազի կլանման կամ այրման կայանքի կառուցում, քանի որ դա կապված է լուրջ ֆինանսական ծախսերի հետ: Այդ հնարավորությունը համայնքը չունի:

Դա կարելի է նախագծել աղբավայրի շահագործման որոշակի փուլում, երբ պարզ կդառնա աղբի իրական կազմը /մորֆոլոգիա/ և քանակները, իսկ շահագործող կազմակերպությունը կսկսի կուտակել որոշակի միջոցներ:

### 5.1.1. Աղբավայրային գազի արտանետումներ

Աղբավայրերում ջերմոցային գազերի արտանետումները ներառում են մեթանի, ածխաթթու գազի և ազոտի ենթօքսիդի արտանետումները կոշտ թափոնների քայքայման ընթացքում: Այս միացություններից հիմնականը, հաշվի առնելով նաև վտանգավորության գործոնը, հանդիսանում է մեթան գազը:

Կոշտ կենցաղային թափոնների աղբավայրերում, թափոնների ծածկման եղանակի կիրառման դեպքում՝ անօդ պայմաններում, մեթանի առաջացումը փոփոխվում է ժամանակի ընթացքում, սկզբնական շրջանում (մինչև 3-5 տարի) այն նվազագույն արժեք ունի, հետո աճում է՝ հասնելով իր առավելագույն արժեքին, և այնուհետև 25-30 տարվա ընթացքում նվազում է: Կիսաքայքայման ժամանակը կարող է տևել մինչև մի քանի տասնյակ տարի:

Մեթանի արտանետումների հաշվարկը կատարվում է “Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագետների խմբի” (ԿՓՓՄԽ) 2006թ. Ուղեցույցում բերված եղանակով: ըստ այդ Ուղեցույցի առաջարկվում է օգտագործել թափոնների հեռացման ոչ պակաս քան 50 տարվա տվյալները: Սա նշանակում է, որ տվյալ տարվա համար թերագնահատված արժեքներ չստանալու համար անհրաժեշտ է հաշվարկը սկսել այդ տարվանից 50 տարուց վաղ տեղադրված աղբը հաշվի առնելով:

Այս հանգամանքը լրացուցիչ բարդություններ է ստեղծում, առանց այդ էլ բավականին բարդ հաշվարկման եղանակում: Հաշվարկի համար պահանջվում են բազմաթիվ տվյալներ և ազգային գործակիցներ, որոնք Հայաստանում սահմանված չեն: Խիստ անորոշ և փոփոխական են ԿԿԹ տարեկան քանակները և դրանց բաղադրությունը:

Ելնելով այս հանգամանքից սույն հաշվետվությունում օգտագործվել են Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2017թ.թ. հաշվետվության փորձագիտական գնահատման արդյունքում ստացված գործակիցները և հիմնավորումները: Հաշվարկը կատարվում է Ուղեցույցի (Հատոր 5, բանաձև 3.3)

$$L_o = DDOCm \cdot F \cdot 16/12, \text{ որտեղ.}$$

$L_o$ ՝ մեթանի առաջացման պոտենցիալը, հազ.տ

$DDOCm$ ՝ աղբանոցում տեղակայված աղբում քայքայվող ածխածնի քանակը, հազ.տ

$F$ ՝ աղբավայրում առաջացող գազերում մեթանի ծավալային մասը

$16/12$ ՝ մեթանի և ածխածնի մոլեկուլյար զանգվածների հարաբերությունը:



Քայքայվող ածխածնիքանակը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$DDOC_m = W \cdot DOC \cdot DOC_f \cdot MCF, \text{ որտեղ}$$

$W$ ՝ աղբավայր տեղափոխվող աղբի քանակը, հազ.տ

$DOC$ ՝ հաշվետու տարում աղբավայր տեղափոխված աղբի և դրանում ածխածնի մասը, հազ.տ ածխածին/հազ.տ աղբ

$DOC_f$ ՝ փաստացի քայքայված  $DOC$  մասնաբաժինը, կոտորակ

$MCF$ ՝ գործակից, որի հաշվի է առնում անաերոբ քայքայման հնարավորությունը, կոտորակ

Տվյալ տարում աղբավայրեր տեղափոխված ԿԿԹ զանգվածում քայքայվող օրգանական ածխածնի քանակը ( $DOC$ ) որոշելու համար ( $Գգ C/Գգ ԿԿԹ$ ) անհրաժեշտ է դիտարկել ԿԿԹ մոնիթորինգային մասին տեղական հուսալի տվյալները: Կադաստրի հաշվետվության շրջանակներում դիտարկվել է հանրապետությունում վերջին տասնամյակում գոյացած ԿԿԹ-ներում քայքայվող օրգանական ածխածին պարունակող բաժնի աճ (սննդային թափոններ, թուղթ, ստվարաթուղթ): Առկա տվյալների համաձայն  $DOC$  գործակցի արժեքը հավասար է 0.17, որը շատ մոտ է Ուղեցույցում նշված վերապահված արժեքին՝ 0.18:

- Փաստացի քայքայված  $DOC$  մասնաբաժինը ( $DOCR_fR$ ) ընտրված է 0.5 [Gen-1, հատոր.5, գլուխ.3, 3.2.3., FRACTION OF DEGRADABLE ORGANIC CARBON WHICH DECOMPOSES  $DOCR_fR$ , էջ 3.13], աղբավայրային գազում մեթանի մասնաբաժինը ( $F$ )՝ 0.5 [Gen-1, Հատոր 5, Գլուխ 3, Աղյուսակ 3.1]:

Կոշտ կենցաղային թափոնների աղբավայրերից (ԿԿԹԱ) մեթանի արտանետումների հաշվարկների համար Կադաստրի հաշվետվությունում իրականացվել է ԿԿԹԱ-ների դասակարգումը ըստ ՀՀ քաղաքների՝ օգտագործելով  $MCF$  վերապահված արժեքներ [60TGen-160T, Հատոր 5, Աղյուսակ 3.1]:

- Մայրաքաղաք Երևան՝ մինչև 2006թ. ԿԿԹԱ տեղադրված աղբի 100%-ը, իսկ սկսած 2006թ.-ից 70%-ը տեղափոխվել է խորը P11F<sup>3</sup>P շերտով կառավարվող ԿԿԹ աղբավայր, ուր առկա է ԿԿԹ անաերոբ քայքայում (ՀՀ խոշորագույն՝ «Նուբարաշեն» ԿԿԹԱ).  $ՄՃԳ = 1.0$
- Մայրաքաղաք Երևան՝ ԿԿԹԱ-ներում տեղադրված աղբի 30%-ը սկսած 2006թ.-ից տեղափոխվում է Ջրվեժի, Սպանդարյանի և Սասունիկի աղբավայրեր՝ խորը շերտով չկառավարվող ԿԿԹԱ-ներ,  $ՄՃԳ = 0.8$ :
- Քաղաքներ Գյումրի և Վանաձոր՝ ԿԿԹ խորը շերտով չկառավարվող ԿԿԹԱ-ներ,  $ՄՃԳ = 0.8$ :

<sup>3</sup> 5 մետր և ավելի խորությամբ

- Հանրապետության այլ 45 քաղաքներ՝ ԿԿԹ ոչ խորը P12F4P շերտով չկառավարվող ԿԿԹԱ-ներ են,  $MCF = 0.4$ :

Գործունեության տվյալներն ընտրելիս հիմք է ընդունվել ԿՓՓՄԽ 2006թ. Ուղեցույցի այն հղումը, որ եթե չկան հավաստի տվյալներ գյուղական բնակավայրերում իրականացվող աղբահանության վերաբերյալ, ապա ԿԿԹԱ տեղադրվող աղբի ծավալները հաշվարկելիս պետք է հիմնվել քաղաքային բնակչության թվի վրա [Gen-1, Հատոր 5, Գլուխ 2, Աղյուսակ 2.1, 2A.1]:

Այս գործակիցներից ընտրվել առավել համապատասխան  $MCF = 0.4$  արժեքը:

Աղբի տարեկան քանակը ընդունվել է Սասունիկի աղբավայրի տեխնիկական գեկույցում բերված տարեկան առավելագույն քանակը՝ 29000 մ<sup>3</sup> կամ 7250 տ:

ընտրվել է ըստ Կոմի ընկերության կանխատեսման՝ 2025 տարվա ցուցանիշը, այն հիմնավորմամբ որ մեթանի առաջացում կսկսվի 3 – 5 տարիների ընթացքում:

$$DDOC_m = 7.25 \text{ հազ.տ} \cdot 0.17 \cdot 0.5 \cdot 0.4 = 0.2465 \text{ հազ.տ/տարի}$$

$$Lo = 0.2465 \cdot 0.7 \cdot 16 / 12 = 0.23 \text{ հազ.տ/տարի կամ } 230 \text{ տ կամ } 7.3 \text{ գ/վրկ:}$$

Ըստ կադաստրի հաշվարկների 2017 թվականին ՀՀ տարածքում ԿԿԹ քայքայումից առաջացած արտանետումների ընդհանուր քանակը կազմել է 364.3 հազ.տ:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ հաշվարկի արդյունքում առաջացած գազը կարող է արտանետվել դեպի մթնոլորտ եթե ունենա ելք: Այստեղ կարելի է դիտարկել մի քանի տարբերակ.

- Առաջացած գազերը ինչ որ եղանակով շատ դանդաղ ինքնաբերաբար դուրս են գալիս երկրի մակերես,
- Իրականացվում է գազերի հավաքում և այրում,
- Իրականացվում է գազերի հավաքում և օգտահանում՝ արտադրելով էլեկտրաէներգիա համապատասխան գեներատորի/կայանքի միջոցով:

Երրորդ տարբերակը քիչ հավանական է, քանի տնտեսապես շահավետ չէ նման փոքր քանակների համար գնել, տեղադրել և շահագործել բավական թանկ սարքավորումներ:

### **5.1.2. Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա**

Աղբավայրի շահագործման ընթացքում ազդեցությունը պայմանավորված է աղբի քայքայման արդյունքում առաջացող արտահոսքերով /գտվածք/:

Արտահոսքը առաջանում է աղբում պարունակվող օրգանական միացությունների քիմիական վերափոխման արդյունքում: Ելնելով այդ հանգամանքից, գտվածքի կազմը

<sup>4</sup> Միջև 5 մետր խորությամբ

Ժամանակի ընթացքում փոխվում է: Ընդունված է գտվածքի առաջացումը բաժանել երկու հիմնական փուլի: Ստորև բերված է այդ գտվածքների կազմը ըստ մասնագիտական գրականության<sup>5</sup> տվյալների:

Աղյուսակ 5.2. Զտվածքի միջինացված կազմը ըստ աղբի պահպանման փուլերի

<i>Ցուցանիշ</i>	<i>Ացետոզենեզի փուլ</i>	<i>Մետանային փուլ</i>
pH	6.1	8
ԹԿՊ <sub>5</sub> , մգO <sub>2</sub> /լ	13000	180
ԹՔՊ, մգO <sub>2</sub> /լ	22000	3000
SO <sub>4</sub> <sup>2-</sup> , մգ/լ	500	80
Ca <sup>2+</sup> , մգ/լ	1200	60
Cl <sup>-</sup> , մգ/լ	50	2500
NH <sub>4</sub> <sup>+</sup> , մգ/լ	750	250
Mg <sup>2+</sup> , մգ/լ	470	180
Fe, մգ/լ	120	15
Mn <sup>2+</sup> , մգ/լ	25	0.7
Zn <sup>2+</sup> , մգ/լ	20	0.6

Ինչպես երևում է աղյուսակից, գտվածքը շատ աղտոտված է, մանավանդ առաջին փուլում: Այս կազմով գտվածքի վնասագերծման ամենաօպտիմալ լուծումը՝ աղբի խոնավացման համար օգտագործումն է, ինչը և նախատեսված է աղբավայրի ծրագրով: Աղբավայրի խոնավացման նպատակն է կանխել աղբի չորացումը և ինքնաբռնկումը:

Զտվածքի հավաքվում է աղբավայրի ցածրադիր գոտում առկա ավազանում, որը ունի բնական կավային հատակ: Այստեղ նաև հավաքվում են անձրևաջրերը:

Խոնավացումը կատարվում է շարժական (погружной) պոմպի միջոցով:

Ստորգետնյա տարածքների աղտոտում չի սպասվում, քանի որ աղբավայրի տարածքի ստորին հատվածը բնականորեն պատված է կավային շերտով:

Քանի որ տեղում չկա և չի նախատեսվող ջրագիծ և կոյուղու ցանց, աշխատակիցների խմելու համար ջուրը գնվում է 20 նալոններով: Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկը ՀՀ տարածում կիրարկելու մասին» N321 -Ա հրամանի՝ «Տարեկան 100 հազ. տ թափոն ընդունող և 30 տարուց ավել շահագործման ժամկետով մեծ աղբավայրերը պետք է ունենան մշտական ջրամատակարարում: Փոքր և միջին աղբավայրերի դեպքում՝ ջրամատակարարումը կարող է իրականացվել բերովի ջրով:»

<sup>5</sup> Рекомендации по сбору, очистке и отведению сточных вод полигонов захоронения твердых бытовых отходов. Госкомитет РФ по строительству и жилищно-коммунальному комплексу. Федеральных центр благоустройства и обращения с отходами. Москва. 2003

Արտահոսքը հավաքվում է տնակի տակ տեղադրված կոնտեյներում, որի պարունակությունը պարբերաբար տեղափոխվում է մոտակա կոյուղու ցանց:

### **5.1.3. Հողածածկ**

Հաշվի առնելով, որ աղբավայրը փաստացի շահագործվում է ավելի քան 7 տարի, հողածածկը արդեն իսկ վնասված է: Իսկ քանի որ նոր հողատարածքներ չեն ներգրվելու, հողածածկի լրացուցիչ վնասում չի նախատեսվում

### **5.1.4. Երթևեկություն**

Աղբավայրի շահագործման ժամանակ աղբատար մեքենաների երթևեկությունը կստեղծի որոշակի ծանրաբեռնվածություն ներհամայնքային ճանապարհներին: Սակայն հաշվի առնելով աղբավայրի հզորությունը երթերի միջին օրական թիվը կլինի՝ 3 - 5 և այս քանակը չի կարող էապես ազդել ճանապարհների երթևեկության վրա:

### **5.1.5. Կենսաբազմազանություն**

Հաշվի առնելով, որ աղբավայրը փաստացի շահագործվում է և տարածքում վայրի բուսատեսակներ և կենդանիների ապրելավայրեր չկան, շոշափելի ազդեցություն կենսաբազմազանության վրա չի նախատեսվում:

### **5.1.6. Սանիտարապաշտպանիչ գոտի**

Աղբավայրի սանիտարական պահպանման գոտու լայնությունը ընդունվում է ըստ ՄՆԻՊ 2.07.01-89 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջների: Ըստ այդմ աղբավայրերը տեղադրվում են քաղաքների և բնակավայրերի սահմաններից դուրս՝ բնակելի շենքերից ոչ պակաս 500 մետր հեռավորության վրա:

## **5.2. Աղբավայրի փակում**

Աղբավայրի փակման բնապահպանական ռիսկերը պայմանավորված են այն հանգամանքով, որ կպահանջվի բազմամյա վերականգնողական շրջան: Բացի այդ, գտվածքների և կենսագազի առաջացումը կարող է շարունակվել ևս 50 տարի կամ նույնիսկ ավելի:

Համապատասխանաբար աղբավայրի փակումից կամ կոնսերվացումից հետո պետք է շարունակել սպասարկել գազահավաքման և գտվածքի վերահսկման աշխատանքը:

Հաշվի առնելով աղբավայրի շահագործման երկար ժամկետը, նպատակահարմար

է աղբավայրի փակումից առաջ մշակել փակման ծրագիր, որի հիմնական դրույթները կլինեն.

- Գոյություն ունեցող շինությունների և ենթակարուցվածքի ապագա օգտագործման հարցի որոշում
- Տարածքի բարեկարգում և վերակուլտիվացում
- Մոնիթորինգի ծրագրի մշակում, այդ թվում դրա ֆինանսավորման աղբյուրների և պատասխանատուների սահմանում:

### 5.3. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնաձին ազդեցության տեսակետից նախատեսվող աղբավայրի շրջանում հիմնական աղտոտման աղբյուր են հանդիսանում ավտոճանապարհի երթևեկությունը:

Սակայն քանի որ իր բնույթով տրանսպորտային երթևեկությունը տարբերվում է աղբավայրի ազդեցությունից. հավաքական արդյունք չի սպասվում:

## 6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = \text{ՀԱԳ} + \text{ՋԱԳ} + \text{ՕԱԳ},$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն.

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է,

որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

### 6.1. Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է աղբային գազի կազմում առաջացող մեթանի արտանետումներով:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{q} \Phi_{g} \sum_{i} \Psi_{i} \Phi_{i}, \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,  $\sum_{q}$  -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, Սասունիկի աղբավայրը շրջապատված է հիմնականում ամայի տարածքներով, որոշ տեղերում առկա է խոտածածկ, հանդիպում են նաև վարելահողեր: Այս բոլոր կատեգորիաներից ընտրվել է առավել խիստ՝ վարելահողերի գործակիցը՝ 0.25:

$\Phi_{g}$ -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մույն կարգի համաձայն  $\Phi_{g} = 1000$  դրամ:

$\Psi_{i}$  -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, ցածր մոլեկուլյար ածխաջրածինների համար՝ 3.16:

$\Phi_{i}$  -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

$\Phi_{i}$  գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\Phi_{i} = q (3 S_{U_i} - 2 U_{\theta} U_i), S_{U_i} > U_{\theta} U_i (2)$$

որտեղ՝

$U_{\theta} U_i$  -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

$S_{U_i}$  -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումները կատարվելու են բնակավայրերից ավելի քան 4 կմ հեռավորության վրա,  $\text{P}_i = \text{S}_{\text{ու}}$

q = 1՝ անշարժ աղբյուրների համար,

q = 3՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

$$U = 0.25 \times 1000 \times 3.16 \times 230 = 181700 \text{ դրամ.}$$

Սասունիկի աղբավայրի շահագործման արդյունքում հաշվարկված միջին տարեկան տնտեսական վնասը կկազմի՝ մեկ հարյուր ութսուն մեկ հազար յոթ հարյուր դրամ:

## 6.2. Ջրային ռեսուրսներ

Սասունիկի աղբավայրի շահագործման արդյունքում առաջանում են զտվածքներ, սակայն դրանք կուտակվում են աղբավայրի տարածքում և աղտոտված արտահոսք չի առաջանում, անձրևաջրերի և ձնհալքի հոսքերը նույնպես հավաքվում են կուտակման ավազաններում և գոլորշիանում կամ օգտագործվում աղբի ջրցանի /խոնավացման/ համար: Խոնավացումը կատարվում է աղբի ինքնաբռնկումը բացառելու նպատակով: Այդ նպատակով նախատեսված է հատուկ պոմպի և ձկուն խողովակների տեղադրում:

## 6.3. Հողային ռեսուրսներ

Աղբավայրի տարածքում հողածածկը արդեն իսկ խախտված է, նոր տարածքներ չեն ներգրավվելու և տնտեսական վնաս չի հաշվարկվում:

# 7. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## 7.1. Ընդհանուր դրույթներ

Սասունիկի աղբավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցման միջոցառումներ: Միջոցառումների նկարագրությունը, կատարողները և նախատեսված ծախսերը ներկայացված են բնապահպանական կառավարման պլանում: Միջոցառումների կատարումը և արդյունավետությունը վերահսկելու կարգը, դրանց կատարման պատասխանատուները և իրականացման ժամկետները ներառված են «Մոնիթորինգի ծրագրի» մեջ:

## 7.2. Անբարենպաստ պայմաններում և վթարային իրավիճակներում նախաստեպող միջոցառումները և ծրագրերը

Ելնելով գործունեության բնույթից, աղբավայրի շահագործման ժամանակ վթարային իրավիճակներ չեն սպասվում: Շահագործման ժամանակ հնարավոր են բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար օպերատորի կողմից պետք իրականացվեն հետևյալ միջոցառումները.

### *Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ*

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները դրանք օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առկայությունը որոշվում է պատասխանատու աշխատողների կողմից՝ վիզուալ եղանակով:

Վիզուալ եղանակով՝ օդերևութային պայմանները անբարենպաստ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը անհրաժեշտ է ստուգել մոտակ օդերևութաբանական կայան հարցումի միջոցով:

Նշված որոշման աղբավայրի շահագործման պատասխանատու անձանց կողմից անձնակազմը հրահանգավորվում և տեղեկացվում է անբարենպաստ օդերևութաբանական պայմանների հնարավոր առաջացման մասին:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ: Նորմատիվ ակտերով դրանց հստակ չափորոշիչները բացակայում են: Ըստ կատեգորիաների տարբերակումը կատարվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների հիման վրա.

- I կատեգորիա՝ քամու արագության նվազում
- II կատեգորիա՝ անհողմություն, չոր եղանակ
- III կատեգորիա՝ անհողմություն, թանձր մառախուղ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում պետք է իրականացվեն ներքոհիշյալ միջոցառումները՝

#### I կատեգորիա՝

- խստացվում է աղբի ընդունման և դատարկման հսկողությունը,

#### II կատեգորիա՝



- աղբատար մեքենաների դատարկումը իրականացվում է հերթով՝ մեկ մեկ:

### III կատեգորիա՝

- ժամանակավորապես դադարեցում է աղբի փռումը և հարթեցումը՝ մինչև համապատասխան հրահանգ ստանալը:

### *Հրդեհային անվտանգություն*

- Ա. Աղբավայրում հրդեհի յուրաքանչյուր բռնկման և հրդեհի հայտնաբերման դեպքում միացնում է ձայնային ազդանշանը:
- Բ. Բոլոր այն էլեկտրական սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ սարքեր, ապահովված կլինեն ձեռքի կրակմարիչներով:
- գ. Պատասխանատու անձը ամբողջ տարածքում անց է կացնում արտաքին ստուգում՝ որպես օրվա աշխատանքային պլանի մի մաս:
- Դ. Հրդեհի ժամանակ կհոսանքազրկվեն բոլոր էլեկտրական սարքերը, անձնակազմը կտեղափոխվի անվտանգ վայր:
- Ե. Աղբավայրի տարածքում նախատեսված է տեղադրել գիդրանտներ, կրակմարիչներ և այլ

### Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ աղբավայրի և փոխաբեռնման կայանների շահագործումը դադարեցվում է, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

Երևույթների և իրավիճակի մասին անմիջապես տեղեկացվում են արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանման պատասխանատուները:

Վթարային իրավիճակները կանխելու նպատակով նախատեսված են նաև.

- Սպասարկող անձնակազմը ապահովել անհատական պաշտպանման միջոցներով
- իրականացնել անձնակազմի ուսուցում աշխատանքի անվտանգության հարցերով
- Հիմնել հուսալի կապ աղբավայրի և մարզային համապատասխան պաշտոնյաների, շտապօգնության, փրկարար ծառայության, ոստիկանության, հրշեջ ծառայության, էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման օպերատորների միջև, արտակարգ իրավիճակներին համապատասխան արձագանքում ապահովելու նպատակով:
- Մշակել և ԱԲՆ-ի հետ համաձայնեցնել արտակարգ իրավիճակների պլանը, որը պետք է հասանելի լինի բոլոր տեղամասերում:

### **7.3. Սոցիալական ազդեցության մեղմման միջոցառումներ**

Աղբավայրի շահագործումը ինքնին լուծում է շատ կարևոր սոցիալական խնդիր՝ աղբի խնդի լուծում:

Սասունիկի աղբավայրի շահագործման համար կպահանջվեն աշխատանքային ռեսուրսներ: Անձնակազմը ամբողջությամբ հավաքագրված է տեղական բնակչությունից:

Բացի այդ, աղբավայրը շահագործող ընկերությունը կմասնակցի համայնքների որոշ սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակման և հետագայում նաև ֆինանսավորման գործընթացին:

Սպասարկող անձնակազմի համար նախատեսված է տնակ, որում առկա է սանիտարական հանգույց, հանգստի սենյակ և սննդի ընդունման սենյակ:

## 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### 8.1. Բնապահպանական կառավարման պլան

Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ) հանդիսանում է նախատեսվող գործունեության կազմակերպման և իրականացման կարևոր գործիք, այն նախանշում է անհրաժեշտ դիտարկումներ, վերահսկման մեխանիզմներ, մեղմացնող միջոցառումներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել աղբավայրի շինարարության և շահագործման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու, մեղմացնելու կամ փոխհատուցելու համար: Պլանում նշվում են հնարավոր ազդեցությունները, դրանց առավել հավանական վայրերը, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, վերջիններիս իրականացման պատասխանատուները, ինչպես նաև նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ գումարների մոտավոր ծավալները:

ԲԿՊ-ներառում է հետևյալը.

ա/Նախատեսվող գործունեության տեղամասերը և գործընթացները,

բ/Պոտենցիալ բնապահպանական ազդեցությունները (ներառյալ սոցիալական, պատմամշակութային ռեսուրսների վրա ազդեցությունը),

գ/Մեղմացնող միջոցառումներ նախապատրաստական, շինարարության և շահագործման փուլերում և գործունեության ավարտի համար:

դ/Տարբեր իրավասու կողմերի պարտավորությունները ԲԿՊ- ով նախատեսված բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների իրականացման ընթացքում:

Ստորև, աղյուսակի տեսքով, բերված է Սասունիկի աղբավայրի բնապահպանական կառավարման պլանը:

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

<i>Շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցություն</i>	<i>Բնապահպանական կամ սոցիալական մեղմացման միջոցառում</i>	<i>Միջոցառման ծախսերը, հազ.դրամ</i>	<i>Միջոցառման պատասխանատու կամ կատարող</i>
<i>Աղբավայրի շահագործում</i>			
<p>Շրջակա միջավայրի բաղադրիչների աղտոտում</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Նվազեցնել աղբավայրի տարածքում անձածկ թափոնների ազդեցության ենթարկվելու ժամանակահատվածը, մասնավորապես օդի բարձր ջերմաստիճանով օրերին,</li> <li>• Թափոնները բեռնաթափել, տարածել և կոմպակտավորել հնարավորինս փոքր տարածքում,</li> <li>• Պարբերաբար ստուգել և պահպանել աղբավայրի վերնածածկը դրա ամբողջականությունը</li> <li>• Օգտագործել ֆիլտրատների համար նախատեսված կոնտեյներներով աղբահանման մեքենաներ,</li> <li>• Պարբերաբար դատարկել կոնտեյներները՝ ֆիլտրատների համար նախատեսված ավազանում,</li> <li>• Փոշու նվազեցման համար՝ գրունտային և բուսածածկից զուրկ մակերեսների վրա իրականացնել ջրցանում, ներառյալ՝ հողի տեղափոխման աշխատանքների ընթացքում, մինչ մաքրումը և փորումը, հետլիցքը, կոմպակտացումը կամ աստիճանավորումը,</li> <li>• Թույլատրել միայն աղբատար մեքենաների մուտքը տարածք,</li> <li>• Ապահովել բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը հատուկ փրփրային միջոցներով, որոնցից չի առաջանում արտահոսք՝ մինչ տեղանքի լքումը</li> </ul>	<p>Ընթացիկ ծախսեր</p> <p>Ընթացիկ ծախսեր</p> <p>Ընթացիկ ծախսեր</p> <p>Ընթացիկ ծախսեր</p> <p>Ընթացիկ ծախսեր</p> <p>120.0 տարի</p>	<p>«Էկո-կենտրոն» ՍՊԸ Ենթակապալառու ընկերություններ</p>

Շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցություն	Բնապահպանական կամ սոցիալական մեղմացման միջոցառում	Միջոցառման ծախսերը, հազ.դրամ	Միջոցառման պատասխանատու կամ կատարող
	<ul style="list-style-type: none"> <li>Պարբերաբար ստուգել ֆիլտրատների հավաքման և մշակման կառույցները, պատշաճ շահագործման տեխնիկական պայմանների ապահովման նպատակով,</li> <li>Պարբերական մոնիթորինգի ենթարկել ստորգետնյա ջրերի և մակերեսային ջրերի որակը:</li> </ul>	360.0	Հավատարմագրված լաբորատորիա
Աշխատանքի անվտանգություն	<ul style="list-style-type: none"> <li>Սպասարկող անձնակազմը ապահովել անհատական պաշտպանման միջոցներով</li> <li>Իրականացնել անձնակազմի ուսուցում աշխատանքի անվտանգության հարցերով</li> <li>ապահովել աշխատակիցների սննդի ընդունման և հանգստի պայմանները</li> <li>ապահովել աղբավայրի լուսավորության պահանջները</li> <li>Հիմնել հուսալի կապ աղբավայրի և մարզային համապատասխան պաշտոնյաների, շտապօգնության, փրկարար ծառայության, ոստիկանության, հրշեջ ծառայության, էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման օպերատորների միջև, արտակարգ իրավիճակներին համապատասխան արձագանքում ապահովելու նպատակով:</li> <li>Մշակել և ԱԲՆ-ի հետ համաձայնեցնել արտակարգ իրավիճակների պլանը, որը պետք է հասանելի լինի բոլոր տեղամասերում</li> </ul>	Ընթացիկ ծախսեր	«Էկո-կենտրոն» ՍՊԸ
Սոցիալական ազդեցություն	<ul style="list-style-type: none"> <li>→ Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ համայնքների ղեկավարության և բնակիչների հետ՝ ներկայացնելով շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքները</li> <li>→ Փակցնել և կիրառել մեքենաների արագության սահմանափակումներ մեքենաների երթևեկությունից առաջացող փոշու նվազեցման համար,</li> </ul>	Ընթացիկ ծախսեր	«Էկո-կենտրոն» ՍՊԸ Աշտարակի համայնքապե- տարան

<i>Շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցություն</i>	<i>Բնապահպանական կամ սոցիալական մեղմացման միջոցառում</i>	<i>Միջոցառման ծախսերը, հազ.դրամ</i>	<i>Միջոցառման պատասխանատու կամ կատարող</i>
	→ Մշակել երթևեկության կառավարման պլան երթևեկության սահուն հոսքը և երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով,		

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 480.0 հազար դրամ:

Բնապահպանական ծախսերի առանձնացումը կրում է պայմանական բնույթ, քանի որ սանիտարական աղբավայրի նպատակը ամբողջությամբ կրում է բնապահպանական և սոցիալական բնույթ:

## **8.2. Մշտադիտարկումների /մոնիթորինգի/ նպատակը**

Մասունիկի աղբավայրի հրապարակում և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կստեղծի ստեղծել տեղեկատվական հենք՝ հսկելու աղբավայրի գործունեության հետագա շարունակական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

## **8.3. Մոնիթորինգի տեխնիկական նկարագրությունը**

Մասունիկի աղբավայրի համար առաջրկվող մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

1. Օդերևութաբանական տվյալների մոնիթորինգ՝ օդերևութաբանական - կլիմայական տվյալները պետք է որոշվեն մոտակայքում գտնվող օդերևութաբանական կայանի կողմից:
2. Ստորերկրյա ջրերի մոնիթորինգ՝ տարածքի էֆեկտիվ և էկոլոգիապես անվտանգ վերականգնման համար, անհրաժեշտ է հնարավոր ստորերկրյա ջրերի մանրակրկիտ ստուգում է և / կամ ընդերքի աղտոտման ստուգում, ինչը կարող էր առաջանալ հոսքաջրերի արտահոսքից:
3. Կենսաբազմազանության մոնիթորինգ՝ պարբերաբար պետք է իրականացվի աղբավայրի մերձակա տարածքների արտաքին զննում, տարբեր եղանակային շրջաններում, արձանագրելու համար բուսածածկի փոփոխությունները:
4. Հողային ռեսուրսների աղտոտման տարածումը վերահսկելու նպատակով նախատեսվում է տարեկան մեկ անգամ կատարել հողածածկի նմուշառում աղբավայրի սահմաններից դուրս՝ 4 կետից, նմուշը ներկայացնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա անալիզի համար:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԿԱՅԱԿԱՆ**  
**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «7» Հոկտեմբերի 2015 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)**

«Էկո Կենտրոն» ՍՊԸ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆԿԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Արագածոտն, համայնք Սասունիկ Սասունիկ-Երևան խճուղի 39 հողամաս

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Մրցույթով անշարժ գույքի վարձակալության 28/08/2015 թվականի ս.մ. 3178 պայմանագիր, համաձայնագիր 02/10/2015 թվականի ս.մ. 3631

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 02-095-0185-0027

Մակերեսի չափը (հա)՝ 8

Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Կոմունալ ենթակառուցվածքների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ

**5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի Գրանցված իրավունքի տեսակը չափը
------------------------------	--------	--

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**


Հողամասը վարձակալության է տրամադրված 25 (քսանհինգ) տարի ժամանակով, տարեկան-995000 (իննը հարյուր ինսունհինգ հազար) ՀՀ դրամ վարձավճարով առանց կառուցապատման իրավունքի:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Լևոն Բրեյան  
զբաղեցրած պաշտոնը՝ Արագերի միավորված ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր






ԱԿՏ  
ՀՈՂՀԱՄԱՍԻ  
ՍԱՀՄԱՆԻ ՆՇԱՀԱՐՈՒՄԸ  
ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
"ԳԵՈԼԵՆԴ" ՍՊԸ  
ՏՆՕՐԵՆ  Է. Վիրաբյան


«07» «07» 2021թ.

Կատարող գեոդեզիստ՝  Է. Վիրաբյան  
Պատվիրատու՝

Հասցե՝ Արագածոտնի մարզ, Սասունիկ հանայնք  
Կատարեց հողամասի սահմանների նշահարում բնության մեջ  
Ըստ կադաստրային ծածկագրի 02-095-0185-0027



Ս Խ Ե Մ Ա



Ակտը կազմված է 2 օրինակից: Թիվ 1 օրինակը պահվում է

**ՄՐՑՈՒՅՈՒՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Երկու հազար տասնհինգ թվականի օգոստոսի քսանութին  
Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, քաղաք Աշտարակ,

Սասունիկ համայնք ի դեմս համայնքի ղեկավար՝ Ա.Սարգսյանի լիազորված անձ Վահագն Պարզևի Մխիթարյանի /անձնագիր AM 0747645, տրված 029-ի կողմից 31.05.2012 թվականին, վավերական է մինչև 31.05.2022 թվականը/ բնակվող՝ Արագածոտնի մարզ, Սասունիկ համայնք, 27-րդ փողոց, տուն 6, որը գործում է համայնքի ղեկավարի 20.08.2015թ. թիվ 69 որոշման հիման վրա, այսուհետ «Վարձատու» մի կողմից և «Էկո-Կենտրոն» ՍՊԸ ի դեմս տնօրեն Լ.Սարգսյանի լիազորված անձ Արման Մարտիրոսի Բաղդասարյանի /անձնագիր՝ AN 0567715, տրված 029-ի կողմից 15.07.2013 թվականին, վավերական է մինչև 15.07.2023 թվականը/ բնակվող՝ քաղաք Աշտարակ, Արտակի փողոց, շենք 5, բնակարան 15, որը գործում է 07.08.2015թ. տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ «Վարձակալ» մյուս կողմից, Ելեկոլ 33 քաղաքացիական և հողային օրենսդրության նորմերից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

- 1.1 Սույն պայմանագրին համապատասխան՝ վարձատուն, համաձայն համայնքի ղեկավարի 20.08.2015թ. թիվ 69 որոշման, համայնքի ավագանու 26.02.2015թ. N9-Ա որոշման և 20.08.2015թ. N2 արձանագրության, վարձակալին, համապատասխան վարձավճարի դիմաց, տիրապետման և օգտագործման է տրամադրում Արագածոտն մարզի, Սասունիկ համայնքի, Սասունիկ-Երևան խճուղի, հողամաս N39 հասցեում գտնվող 8 հա /ութ հեկտար/ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության կոմունալ ենթակառուցվածքների հողամաս /ծածկագիր 02-095-0185-0027/:
- 1.2 Վարձատուն սեփականության հանձնվաղ անշարժ գույքի սեփականատերն է, ինչը հաստատվում է ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի «Աշտարակ» սպասարկման գրասենյակի կողմից 13.07.2015թ. տրված N13072015-02-0006 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով:
- 1.3 Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագիրը կնքելու պահին գույքը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ և արգելանքի տակ չի գտնվում, որը հաստատվում է ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի «Աշտարակ» սպասարկման գրասենյակի կողմից 26.08.2015թ. տրված NUS-26082015-02-0223 միասնական տեղեկանքի հիման վրա:
- 1.4 Հողամասը տրամադրվում է էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության համար:
- 1.5 Հողամասի նկարագիրը՝ համայնքային սեփականություն հանդիսացող:
- 1.6 Վարձակալությունը տրվում է հետագայում գնման նախապատվության իրավունքով:

**2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները**

- 2.1 Վարձակալն իրավունք ունի՝
  - 2.1.1 տիրապետելու և օգտագործելու վարձակալված հողամասը՝ սույն պայմանագրին ու հողի նպատակային նշանակության համապատասխան,
  - 2.1.2 Վարձակալված հողամասը ենթարկելու բարելավումների և փոփոխությունների դրա նպատակային օգտագործմանը համապատասխան,
  - 2.1.3 միայն վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներով վարձակալված հողամասը ենթավարձակալության հանձնելու երրորդ անձի,
  - 2.1.4 հողամասի վարձակալության ժամկետի ավարտմանը կամ պայմանագրի վաղաժամկետ դադարեցմանը նախորդող երեք ամսվա ընթացքում միջոցներ ձեռնարկելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան վարձակալված գույքը ժամանակին վարձատուին վերադարձնելու համար, հանելու վարձատուի գրավը համաձայնությամբ իր կողմից հողի վրա կատարված բաժանելի բարելավումները, իսկ ամրակալված անշարժ գույքը՝ կողմերի միջև որոշվող պայմաններով օտարել վարձատուին:
  - 2.1.5 վարձատուից պահանջելու պատճառված վնասների հատուցում՝ պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծելու դեպքում:
  - 2.1.6 վարձատուի համաձայնությամբ, նախապատվության իրավունքով շարունակելու սույն պայմանագիրը՝ դրա ժամկետի ավարտից հետո:

**2.2 Վարձակալը պարտավոր է՝**

- 2.2.1 ժամանակին և սույն պայմանագրով սահմանված կարգով մուծել վարձավճարը:
- 2.2.2 ժամանակին և սահմանված կարգով ապահովել հողատկացման մասին որոշմամբ ու սույն պայմանագրով նախատեսված հողամասի օգտագործմանը ներկայացվող պահանջները և պահպանման միջոցառումները:
- 2.2.3 թույլ չտալ վարձակալված հողամասի այնպիսի փոփոխություն, որը կհանգեցնի հողի արժեքի նվազեցմանը կամ բնութագրերի վատթարացմանը:
- 2.2.4 վարձատուի համաձայնությամբ փոփոխությունների ենթարկել վարձակալված հողամասը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն պայմանագրին համապատասխան:
- 2.2.5 մինչև պայմանագրով նախատեսված վարձակալության ժամկետի լրանալը կամ պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը միջոցներ ձեռնարկել վարձատուի գրավը համաձայնությամբ իր կողմից հողի վրա կատարված բաժանելի բարելավումները հանելու և ամրակալված անշարժ գույքը վարձատուին օտարելու, անբաժանելի բարելավումները և առանց վարձատուի գրավը համաձայնությամբ անշարժ գույքը վարձատուին օտարելու, անբաժանելի բարելավումները և առանց վարձատուի գրավը համաձայնությամբ անշարժ գույքը (բաժանելի և անբաժանելի) վարձատուի պահանջով թողնելու կամ վերացնելու միջոցով հողամասը ժամանակին ազատելու համար:
- 2.2.6 վարձակալված հողամասի վրա գտնվող և վարձակալին սեփականության իրավունքով պատկանող ամրակալված գույքը երրորդ անձի մոտ գրավ դնելու կամ օտարելու դեպքում նախապես գրավը տեղյակ պահել վարձատուին:
- 2.2.7 արգելվում է ինքնակամ կերպով վարձակալության իր իրավունքը լրիվ կամ մասնակիորեն երրորդ անձի փոխանցել կամ զիջել, հողը կամ դրա նկատմամբ գույքային իրավունքները գրավ դնել, իրավաբանական անձի կանոնադրական կապիտալ ներդրել կամ հողամասը երրորդ անձի օգտագործման իրավունքով (հատուցմամբ կամ անհատույց) տրամադրել:
- 2.2.8 Աղբի տեղադրումն իրականացնել աղբավայրերի շահագործման և սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ, բացառելով այլուհանձն և ցեխաֆոն, պլաստմասե և այլ տարաների տարածումը շրջակա միջավայրում: առեռ պարբերաբար ծածկել հողին:



խողովակաշարերի վթար կամ նման այլ իրադարձություններ:  
 7.2 Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվություններից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխել կամ կանխագուշակել, և որի պատճառով վարձակալը չի կարող շարունակել հողի բնականոն օգտագործումը:  
 7.3 Անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսվանից ավել երկարածովելու կամ դրա հետևանքները վեց ամսվա ընթացքում չվերացվելու դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի շարունակման մասին որոշում:  
**8. Եզրահանկիչ դրույթներ**

- 8.1. Սույն պայմանագրի կնքման և ծակերպման հետ կապված ծախսերը կատարում է Վարձակալը :
- 8.2. Սույն պայմանագիրը կնքվում է 4/ չորս/ հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակը պահվում է կողմերի մոտ, ինչպես նաև անշարժ գույքի գրանցման լիազորված պետական մարմնում և մեկ օրինակ մնում է նոտարական գրասենյակում:
- 8.3. Սույն պայմանագիրը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար:
- 8.4. Վարձակալի կողմից վարձակալված հողամասի վրա ամրակալված գույքը հօգուտ երրորդ անձի օտարելու դեպքում վերջինիս են անցնում նաև հողի նկատմամբ վարձակալին նախքան ամրակալված գույքի օտարումը պատկանող իրավունքները և պարտականությունները:
- 8.5. Հողի սեփականատիրոջ կողմից հողը երրորդ անձի օտարելիս՝ վարձակալը պահպանում է վարձակալված հողի նկատմամբ մինչև հողի օտարումն իր ունեցած իրավունքները և պարտականությունները:
- 8.6. Կողմերի միջև ծագած տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 8.7. Կողմերս հավաստիացնում ենք, որ ծանոթացել ենք պայմանագրի բովանդակությանը, այն համապատասխանում է մեր իրական մտադրություններին, գործում ենք սթափ մտքով, չենք գտնվում մոլորության, բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ և գիտակցում ենք սույն պայմանագրի իրավական իմաստը:

ՎԱՐՉԱՏՈՒ՝ Սասունիկ համայնք, համայնքի ղեկավար՝ Ա.Մարգարյանի լիազորված անձ Վահագն Պարզկի Մխիթարյան  
*Վահագն Պարզկի Մխիթարյան*

ՎԱՐՉԱԿԱԼ՝ «Էկո-Կենտրոն» ՍՊԸ, ՍՊԸ-ի տնօրեն Լ.Սարգսյանի լիազորված անձ Արման Մարտիրոսի Բաղդասարյան  
*Արման Մարտիրոսի Բաղդասարյան*

Երևու հազար տասնհինգ թվականի օգոստոսի քսանութին սույն պայմանագիրը վավերացված է իմ «Աշտարակ» նոտարական տարածքի նոտար Գագիկ Հակոբյանիս , կողմից:  
 Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնուրույն, նրանց գործունակությունը, ինչպես նաև (իրավաբանական անձի), նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ Սասունիկ համայնքի իրավունքները ստուգված են:  
 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածին համապատասխան, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ըստ գույքի գտնվելու վայրի անշարժ գույքի պետական կադաստրում:



Գրանցված է սեղանամատյանում ..... 31/8 .....ով  
 Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն  
 ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Երևանի քաղաքի մասին» օրենքների  
 Նոտար ..... Գ. Ո. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՍՏԱՅՆԱԳԻՐ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
Երկու հազար տասնհինգ թվականի հոկտեմբերի երկուսին  
ՀՀ Արագածոտն մարզ, քաղ. Աշտարակ.

Սասունիկ համայնքի ղեմն համայնքի ղեկավար՝ Ա.Մարգարյանի լիազորված անձ Վահագն Պարզևի Մխիթարյանի /անձնագիր AM 0747645, տրված 029-ի կողմից 31.05.2012 թվականին, վավերական է մինչև 31.05.2022 թվականը/ բնակվող՝ Արագածոտնի մարզ, Սասունիկ համայնք, 27-րդ փողոց, տուն 6, որը գործում է համայնքի ղեկավարի 20.08.2015թ. թիվ 69 որոշման հիման վրա, այսուհետ «Վարձատու» մի կողմից և «Էկո-Կենտրոն» ՍՊԸ ի ղեմն տնօրեն Լ.Սարգսյանի լիազորված անձ Արման Մարտիրի Բաղդասարյանի /անձնագիր AN 0567715, տրված 029-ի կողմից 15.07.2013 թվականին, վավերական է մինչև 15.07.2023 թվականը/ բնակվող քաղաք Աշտարակ, Արտակի փողոց, շենք 5, բնակարան 15, որը գործում է 07.08.2015թ. տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ «Վարձակալ» մյուս կողմից, հիմք ընդունելով Սասունիկ համայնքի ղեկավարի 02.10.2015թվ. N76 որոշումը և «Աշտարակ» նոտարական տարածքի նոտարի կողմից 28.08.2015 վավերացված /սեղանամատյան-3178/ մրցույթով անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը, կնքեցին համաձայնագրի հետևյալի մասին:

- 1. Պայմանագրում ավելացնել 1.7 կետը և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
  - 1.7 Հողամասը տրամադրվում է վարձակալությամբ առանց կառուցապատման իրավունքի:
  - 3.Սույն համաձայնագիրը համարվում է 28.08.2015թ./սեղանամատյան-3178/ մրցույթով անշարժ գույքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:
  - 4.Մնացած բոլոր կետերը, որոնք նախատեսված չեն սույն համաձայնագրում, կողմերը կարգավորում են 28.08.2015թ./սեղանամատյան-1378/ մրցույթով անշարժ գույքի վարձակալության պայմանագրի դրույթներով:
  - 5.Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրելու պահից:
  - 6.Սույն համաձայնագրի հետ կապված ծախսերը կատարված է Վարձակալի կողմից
  - 7.Սույն համաձայնագիրը կազմված և հաստատված է 4/չորս/ օրինակից, որից առաջինը պահվում է Աշտարակի նոտարական գրասենյակում, իսկ մյուս օրինակները տրվում է կողմերին:
- ԿՐԿՍԵՐԻ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձատու՝ Սասունիկ համայնք, համայնքի ղեկավար Ա.Մարգարյանի լիազորված անձ Վահագն Պարզևի Մխիթարյան

*Ավագյան Գեորգի Եմբրեսյան*

ՎԱՐՉԱԿԱԼ «Էկո-Կենտրոն» ՍՊԸ ՍՊԸ-ի տնօրեն Լ.Սարգսյանի լիազորված անձ Արման Մարտիրի Բաղդասարյան

*Արման Մարտիրի Բաղդասարյան*

Հոկտեմբերի երկուսին երկու հազար տասնհինգ թվականին Սույն համաձայնագիրը վավերացվել է իմ «Աշտարակ» նոտարական տարածքի նոտար Գաղիկ Հակոբյանիս կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ, կողմերի ընթերցումը և գործունակությունը ստուգված է:

Գրանցված է սեղանամատյանում 3631  
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն ՀՀ «պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների

ՆՈՏԱՐ՝

*Օ. ԿԱՎՈՅԱՆ*

